



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ
Անվճար հեռախոսահամար (800) 776-5746

Հաշմանդամ աշակերտներին ծաղրելը և հաշմանդամության պատճառով հալածանքի ենթարկելը

Փետրվար 2016, Հրատ. #5512.10

Հաճախակի տրվող հարցեր

Ծաղրանքը կարող է խորը ազդեցություն գործել հաշմանդամ աշակերտների վրա, ովքեր հաճախ են ճնշման թիրախ դառնում: Այս հրապարակումն անդրադառնում դաշնային և Կալիֆորնիայի օրենքներով սահմանված դպրոցական համայնքի օրինական պարտականություններին՝ անդրադառնալու և կանխելու հաշմանդամ աշակերտների ծաղրելը և հաշմանդամության պատճառով հալածանքի ենթարկելը: Այս հրապարակումը նաև սահմանում է այն հնարավոր ռազմավարությունները՝ Անհատական ուսումնական Պլանի (IEP, Individualized Education Plan) գործընթացի և այլ ընթացակարգերի իրականացման ժամանակ ծաղրելուն անդրադառնալու համար:

1) Ի՞նչ է ծաղրանքը

Ծաղրանքը ներառում է անհավասարակշիռ ուժի, վնաս պատճառելու մտադրության և կրկնության¹ համակցություն: Ճնշումն արտահայտվում է շատ ձևերով.

- Խոսքի միջոցով գործադրվող ծաղրանք՝ զայրացնել, ծաղրել, նախատել և վախեցնել.
- Ֆիզիկական ծաղրանք՝ հարվածել, վայր գցել, ոտքով հարվածել, թքել կամ հրել.

¹ <http://www.stopbullying.gov/> «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

- Սոցիալական ծաղրանք՝ բամբասանքներ տարածել, հասարակական հարաբերությունները զեղծել, դրամ կամ գույք պահանջել կամ ահաբեկել և
- Վիրտուալ ծաղրանք՝ էլեկտրոնային գործողություններ, ներառյալ տեքստային հաղորդագրությունների, սոցիալական մեդիակայքերի օգտագործում, ինչպիսիք են Ֆեյսբուքը կամ ՅուԹուբը և էլ.փոստը՝ թիրախ կողմին նվաստացնելու համար:

Կալիֆորնիայի օրենքը ճնշումը սահմանում է որպես աշակերտ(ներ)ի կողմից կատարված «ցանկացած ծանր կամ համատարած ֆիզիկական կամ բանավոր գործողություն կամ վարքագիծ»՝, որն ուղղված է [աշակերտ\(ներ\)ի դեմ](#):² Ծաղրանքի գործողությունները կամ վարքագիծը կարող է ներառել գրավոր հաղորդակցություն, էլեկտրոնային գործողություններ, սեռական բռնություն, ատելության բռնություն, ճնշում, սպառնալիք և [ահաբեկում](#):³ Որպեսզի գործողությունը ծաղրանք համարվի, դրանք պետք է ունենան հետևյալ ազդեցությունը կամ կարող են հիմնավորված կերպով կանխատեսվելիանգեցել

- Ֆիզիկական վնասի կամ սեփականության վնասի վախի.
- Վնասակար ազդեցության ֆիզիկական կամ հոգեկան առողջության վրա.
- Միջամտության ուսումնառությանը.
- Դպրոցական միջոցառումներին մասնակցելուն, ծառայություններից և [արտոնություններից](#)⁴ օգտվելուն միջամտություն:

2) Ի՞նչ է հաշմանդամության հալածանքը:

Քաղաքացիական իրավունքների կրթական գրասենյակի վարչությունը (Department of Education Office of Civil Rights) սահմանել է, որ հաշմանդամության հալածանք թշնամական միջավայր ստեղծող վարքագիծ է, որը սահմանափակում է հաշմանդամ մարդկանց մասնակցությունը ուսումնական գործընթացներին կամ

² Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք (California Educational Code) հոդվածներ 32261(f), 48900(r)(1) [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդվածներ 48900(r)(1), 48900.2, 48900.3, 48900.4 [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդվածներ 32261(f), 48900(r)(1). [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

[ծառայություններից](#)⁵ օգտվելը: Հալածանքը կարող է լինել ֆիզիկական կամ բանավոր բռնության կամ սպառնալիքի ձևով: Հաշմանդամության պատճառով հալածանքն՝ ի տարբերություն ծաղրանքի, նաև կարող է ներառել վարքագիծ, որն ուղղված չէ որևէ առանձնահատուկ թիրախի, վնաս հասցնելու մտադրությամբ հիմնավորված չէ և ներառում է եզակի [դեպքեր](#):⁶ Սակայն, ծաղրանքը կարող է հաշմանդամության հանդեպ հալածանք համարվել, եթե այն ուղղված է հաշմանդամության և/կամ հաշմանդամ անձանց դեմ: Հաշմանդամության հանդեպ կարող են հալածանք գործադրել աշակերտները և տարեկիցները, նույնիսկ դպրոցի աշխատակիցները, ինչպիսիք են ուսուցիչները և [վարչական աշխատակիցները](#)⁷ :

3) Դպրոցում ո՞ր օրենքներն են կարգավորում ծաղրանքը և հաշմանդամության հանդեպ հալածանքը:

Ծաղրանքի, հաշմանդամության հաշածանքի և հակախտրականության օրենքները

Դաշնային օրենքի համաձայն՝ 1973թ. Վերականգնման մասին օրենքի(Rehabilitation Act of 1973) 504 հոդվածը և 1990թ. Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքը (ADA, Americans with Disabilities Act of 1990) արգելում են հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը դպրոցական համայնքների կողմից, որոնք դաշնային ֆինանսական միջոցներ են ստանում նաև պետական մարմինների կողմից: Ծաղրանքը և հաշմանդամության հանդեպ հալածանքը կարող է հաշմանդամության պատճառով խտրականության ձև լինել: ԱՄՆ Զաղաքացիական իրավունքների կրթական գրասենյակի վարչությունը սահմանել է, որ հաշմանդամության հանդեպ հալածանքը խտրականության (discrimination) ձև է, որը խախտում է 1973թ. Վերականգնման մասին օրենքի 504 հոդվածի և Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի Գլուխ II-ի⁸ դրույթները:

⁵ <http://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201010.pdf>
«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

⁶ <http://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201010.pdf>
«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

⁷ <http://www2.ed.gov/about/offices/list/ocr/docs/disabharassltr.html>
«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

⁸ <http://www2.ed.gov/about/offices/list/ocr/docs/disabharassltr.html>
«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

Կալիֆորնիայի օրենքը նաև արգելում է դպրոցներում հաշմանդամության պատճառով դրսևորված խտրականությանը:⁹ Բոլոր աշակերտները իրավունք ունեն լիարժեք մասնակցություն ունենալ՝ խտրականությունից և հալածանքից զերծ կրթական գործընթացին: Կալիֆորնիայի հանրային դպրոցները ամրագրված պարտավորություն ունեն՝ պայքարելու ռասայական խտրականության, սեռական խտրականության և կողմնակալության այլ ձևերի դեմ, ինչպես նաև պարտավոր են տրամադրել հավասար կրթական հնարավորություններ: Դպրոցում կատարված հալածանքը, որն ուղղված է որևէ անձի անձնական առանձնահատկությունների կամ կարգավիճակի դեմ, թշնամական միջավայր է ստեղծում և վտանգում է հավասար կրթական հնարավորությունների իրավունքը, որը երաշխավորված է Կալիֆորնիայի սահմանադրությամբ (California Constitution) և Միացյալ Նահանգների սահմանադրությամբ (United States [Constitution](#)¹⁰):

Դպրոցը հալածանքի մասին ծանուցում է ստանում, եթե պատասխանատու աշխատողը, ինչպես օրինակ ուսուցիչը կամ վարչական պատասխանատուն, տեղյակ են հալածող վարքի մասին կամ տեղյակ կլինեին, եթե պատշաճ կերպով աշխատեին: Դպրոցական համայնքները պարտավորություն ունեն անդրադառնալու խտրական հալածանքին, որի մասին տեղյակ են եղել կամ հիմնավորված կերպով պետք է տեղյակ լինեին: ¹¹

Ծաղրանք և Հաշմանդամ անձանց կրթական օրենքը

Բացի այդ, համաձայն Հաշմանդամ անձանց կրթական օրենքի (IDEA, Individuals with Disabilities Education Act), դպրոցական համայնքները պարտավոր են անվճար և համապատասխան հանրային կրթություն (FAPE, free and appropriate public education) տրամադրել հաշմանդամ աշակերտներին, ովքեր հատուկ կրթության իրավունք ունեն: ԱՄՆ Քաղաքացիական իրավունքների կրթական գրասենյակը սահմանել է, որ հաշմանդամության հանդեպ հալածանքը կարող է նվազեցնել

⁹ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 220.

[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁰ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 201(a)-(c).

[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹¹ *Stu տողատակ 9,*

<http://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201010.pdf>

[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

հաշմանդամ աշակերտների՝ հնարային կրթությունից օգտվելու հնարավորությունները և գրկել նրանց [FAPE-ի](#)¹² իրավունքից:

4) Ո՞րն է դպրոցական համայնքների պարտականությունները՝ դպրոցներում ծաղրանքի և հաշմանդամության հալածանքի վերաբերյալ:

Թշնամական ուսումնական միջավայր

Դպրոցական համայնքները կարող են խախտել դաշնային օրենքը, երբ ռասայի, գույնի, ազգային պատկանելության, սեռի կամ հաշմանդամության վրա հիմնված տարեկիցների հալածանքը այնքան լուրջ է, որ թշնամական միջավայր է ստեղծում, իսկ դպրոցի աշխատակիցները նման հալածանքը խրախուսում, հանդուրժում, համապատասխանաբար չեն արձագանքում կամ անտեսում են: ¹³ Մի շարք դատարաններ համարել են, որ հաշմանդամության պատճառով դաժան և համատարած հալածանքը կարող է թշնամական կրթական միջավայր ստեղծել, որը խախտում է Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքը ADA և Վերականգման մասին օրենքի 504 հոդվածի դրույթները: ¹⁴ Հալածանքը թշնամական միջավայր է ստեղծում, երբ վարքագիծը բավականաչափ դաժան, համատարած կամ մնայուն է, որ միջամտում կամ սահմանափակում է աշակերտի մասնակցության ունակությանը կամ դպրոցի կողմից առաջարկվող ծառայություններից, աշխատանքներից կամ հնարավորություններից օգտվելուն:

¹² <http://www2.ed.gov/about/offices/list/ocr/docs/disabharassltr.html>
«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

¹³ 34 Դաշնային որոշումների կանոնակարգ (C.F.R., Code of Federal Regulations) parts 100, 104, and 106. «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

¹⁴ See, *Guckenberger v. Boston University*, 957 F. Supp. 306, 314 (D. Mass. 1997); *Pell v. the Trustees of Columbia University*, 1998 U.S. Dist. Lexis 407, 56 Նյու յորքի հարավային շրջան (S.D.N.Y., Southern District New York 1998); and *Rick C. v. Lodi School District*, 32, Հաշմանդամ անձանց կրթական օրենքի զեկույց (Individuals with Disabilities Education Law Report), 232. «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

Կարգապահություն

Կալիֆորնիայի օրենքի համաձայն աշակերտները կարող են ժամանակավորապես հեռացվել կամ վտարվել, եթե նրանք ներգրավված են ծաղրելու մեջ: Սա ներառում է տեղեկատվական ծաղրանք: ¹⁵

Աշակերտը կարող է ժամանակավորապես հեռացվել կամ առաջարկվել նրա վտարումը, եթե դպրոցի վերակացուն կամ տնօրենը որոշի, որ աշակերտը դիտավորյալ կերպով ներգրավված է եղել հալածանքի, սպառնության կամ ահաբեկման մեջ, «որը բավականաչափ դաժան կամ համատարած է՝ դասարանի աշխատանքի վրա փաստացի և չափավոր ակնկալվող ազդեցություն ունենալու համար, նյութականորեն խանգարելու, զգալիորեն անկարգություն ստեղծելու և խախտելու դպրոցի անձնակազմի կամ աշակերտների իրավունքները՝ ստեղծելով ահաբեկող կամ թշնամական կրթական միջավայր»: ¹⁶

Հակածաղրանքային քաղաքականություն

Կալիֆորնիայի օրենքը պահանջում է, որպեսզի դպրոցական համայնքները որդեգրեն դպրոցներում խտրականությունը, ոտնձգությունը, ահաբեկումը և ճնշումն արգելող քաղաքականություններ: ¹⁷ Դպրոցական համայնքները պետք է նաև բողոքարկման գործընթաց սկսեն՝ խտրականության, ոտնձգության, ահաբեկման և ճնշման վերաբերյալ բողոքներն ընդունելու և քննելու համար: ¹⁸ Դպրոցական համայնքների քաղաքականության շրջանակներում պետք է ժամանակացույց կազմի՝ բողոքները քննելու և լուծելու համար: ¹⁹ Քաղաքականությամբ նաև պետք է գանգատների գործընթաց նախատեսվի, եթե ծնողները համաձայն չեն դպրոցական

¹⁵ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 48900.

[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁶ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 48900.4.

[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁷ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 234.1(a)

[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁸ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 234.1(b)

[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁹ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 234.1(b)(2)

[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

համայնքի բողոքարկման որոշման հետ:²⁰

Շրջանները պետք է երաշխավորեն, որ մարդիկ, ովքեր զեկուցում են դպրոցներում խտրականության, հալածանքի, ահաբեկման կամ ծաղրանքի մասին, պաշտպանված են վրեժխնդրությունից և նրանց ինքնությունը համապատասխանաբար գաղտնի է պահվում: ²¹

Շրջաններից նաև պահանջվում է իրենց բողոքարկման գործընթացում ներառել պահանջ, որպեսզի դպրոցի անձնակազմն անհապաղ միջամտելու քայլեր ձեռնարկի, եթե նրանք ականատես լինեն խտրականության, հալածանքի, ահաբեկման կամ ծաղրանքի գործողությանը, եթե այդպես վարվելն ապահով է:²²

Դուք կարող եք պահանջել Ձեր դպրոցական համայնքի՝ խտրականության, հալածանքի, սպառնության և ծաղրանքի քաղաքականությանը և բողոքարկման գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը: Ձեր դպրոցական համայնքը պետք է այս տեղեկատվությունը Ձեզ համար մատչելի դարձնի: Եթե Ձեր հիմնական լեզուն անգլերենը չէ, ապա այս տեղեկատվությունը պետք է թարգմանվի Ձեր հիմնական լեզվով:²³

Առաջնահերթությունն ներհամայնքային փոխադրման համար

Այն աշակերտի ծնողը, ում երեխան ծաղրանքի է ենթարկվում, կարող է միջհամայնքային փոխադրում խնդրել:²⁴ Կալիֆորնիայի օրենքը նախատեսում է, որ աշակերտին պետք առաջնահերթություն տրամադրել միջհամայնքային փոխադրման համար կամ հատուկ քննում՝ միջհամայնքային հաճախության համաձայնեցման ստեղծման համար:²⁵ Առաջնահերթությունը և հատուկ քննությունը կտրվեն, եթե տարածի համայնքային անձնակազմը կամ այն համայնքի անձնակազմը,

²⁰ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 234.1(b)(3)
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²¹ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 234.1(f)
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²² Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 234.1(b)(1)
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²³ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 234.1(c)
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁴ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 46600(b)
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁵ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 46600(b)
[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

որտեղ փոխադրում է հայցվում, որոշի, որ աշակերտն իր տարածքում ծաղրանքի է ենթարկվել: ²⁶

5) Ծնողներն ինչպե՞ս կարող են ասել, որ իրենց երեխան ծաղրանքի է ենթարկվում:

Ուշադրություն դարձրեք երեխային և նրա վարքագծի, տրամադրության կամ արտաքինի մեջ որևէ փոփոխությանը, ինչպիսիք են՝

- Փոփոխություններ ուտելու և քնելու սովորությունների մեջ:
- Չնահատականների և ուսումնական առաջադիմության անկում:
- Դպրոցից խուսափում, դասից բացակայություն, դանդաղկոտություն կամ որևէ այլ կերպ դպրոցը չսիրելու արտահայտում:
- Ֆիզիկական բախման կամ վնասվածքի ապացույց, ինչպիսիք են կտրվածքները, կապտուկները կամ պատռված հագուստը:
- Ընկճվածություն, անհանգստություն, միայնություն կամ ցածր ինքնագնահատական:

Երբեմն հաշմանդամ աշակերտներն իրազեկ չեն լինում, որ ծաղրվում են, ուստի կարևոր է, որ ծնողները հաղորդակցվեն իրենց երեխայի հետ, նրանց հարցնեն իրենց տարեկիցների հետ ունեցած հարաբերությունների մասին:

6) Ծնողներն ինչպե՞ս կարող են IEP գործընթացն օգտագործելով անդրադառնալ ծաղրանքին:

Եթե ծնողները կասկածում են կամ տեղյակ են, որ իրենց հաշմանդամ երեխան ծաղրանքին առնչվող խնդիրներ ունի դպրոցում, նրանք պետք է անհապաղ այդ մասին տեղեկացնեն դպրոցին: Ծնողները նաև կարող են ցանկանալ IEP ժողովի գումարում պահանջել: IEP ժողովը լավ հնարավորություն է՝ դպրոցի անձնակազմի հետ զրուցելու մտահոգող ծաղրանքի վերաբերյալ:

Եթե ծնողները կարծում են, որ ծաղրանքը հնարավոր է իրենց երեխայի զգացմունքային և սոցիալական բարեկեցության և/կամ ուսումնական առաջադիմության վրա ազդեցություն ունենա, նրանք նաև կարող են գրավոր խնդրանք ներկայացնել՝ գնահատելու իրենց երեխայի հոգեկան և զգացմունքային վիճակը: Այս գնահատումը կարող է օգնել ծնողներին

²⁶ Կալիֆորնիայի ուսումնական մասին օրենսգիրք հոդված 46600(b) [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

և IEP թիմին՝ գտնելու համապատասխան ծառայություններ՝ անդրադառնալու այն ազդեցությանը, որը ճնշումն ունեցել է իրենց երեխայի կրթության վրա:

IEP ժողովը կարևոր է շեշտել, որ ծաղրանքը կամ հաշմանդամության պատճառով հալածանքը ազդում է երեխայի՝ իր կրթությունից օգուտ քաղելու վրա, և որ անհրաժեշտ IEP-ում անդրադառնալ ճնշմանը, որպեսզի երեխան FAPE ստանա:

Կան շատ նպատակներ, հարմարություններ և ծառայություններ, որոնք կարող են միավորվել երեխայի IEP-ի մեջ՝ ճնշման անդրադառնալու համար: Ահա IEP նպատակների և միջամտությունների մի քանի օրինակներ, որոնց կարելի է անդրադառնալ ծաղրանքին վերաբերող խնդիրների դեպքում:

Սոցիալական հմտությունների կառուցում: Աշակերտը կարող է սովորել համապատասխան սոցիալական փոխազդեցության մասին, ինչպես նաև սովորել՝ ճանաչելու անընդունելի սոցիալական փոխազդեցությունները և ծաղրանքի վարքագիծը: Երբեմն աշակերտները, ովքեր ծաղրվում են, չգիտեն, որ այլ աշակերտների ծաղրանքն անընդունելի է կամ նրանք ծաղրանքին ազդեսիվ կերպով են հակադարձում:

Դրական միջանձնային հարաբերությունների ձևավորում: Ավելի հավանական է, որ այն աշակերտները, ովքեր կարող են դրական հարաբերություններ ստեղծել և ընկերություններ անել, վստահություն կունենան և ավելի լավ պատրաստված կլինեն՝ դիմադրելու ծաղրանքին կամ սպառնալից վարքագծին:

Շահերի ինքնապաշտպանության հմտությունների զարգացում: Երեխաները կարող են սովորել ճիշտ պատասխաններ տալ ծաղրանքին, ներառյալ այն, թե ինչպես և երբ պետք է այդ մասին ծանուցել համապատասխան մեծահասներին, «Վերջ տուր» ասել, հեռանան կամ խուսափեն սթրեսային իրավիճակներից:

Վերահսկում կամ խուսափում ծաղրանքից: IEP-ն կարող է հարմարեցումներ տրամադրել, որպեսզի դպրոցի անձնակազմը կարողանա աշակերտին վերահսկել կամ հետևել, զերծ պահել ծաղրանքից կամ աշակերտին թույլ տալ խուսափել սթրեսային կամ հարձակողական իրավիճակներից կամ միջավայրերից (օրինակ միջանցքները կամ ավտոբուսի ետևի մասը): Սակայն, ուշադիր եղեք, որ այս մեթոդները «չպատժեն» երեխային, նրանց

չափազանց սահմանափակող միջավայրի մեջ չդնեն կամ նրանց չգրկեն իրենց հասակակիցների հետ շփվելու հնարավորություններից:

Խորհրդատվություն կամ այլ աջակցող ծառայություններ:

Սա կարող է լինել խորհրդատվություն դպրոցի հոգեբանի հետ կամ ոչ պաշտոնական ստուգումներ ուսուցչի հետ, ուղղորդման խորհրդատուի կամ տնօրենի օգնությունը, ում կարող է աշակերտը դիմել, երբ նա ծաղրանքի կամ սպառնալիքի է ենթարկվում :

Ծնողի խորհրդատվություն և վերապատրաստում: Ծնողի խորհրդատվությունը կարող է օգնել ծնողներին հասկանալ իրենց երեխայի հատուկ կարիքները և նրանց օգնել ձեռք բերել այն հմտությունները, որոնք նրանց թույլ կտան աջակցել երեխայի IEP-ի իրականացմանը:

Դպրոցի անձակազմին և/կամ տարեկիցներին կրթելը:

Դպրոցական անձնակազմը կարող է կրթվել դպրոցում ծաղրանքին վերաբերող քաղաքականության և բողոքարկման ու զեկուցման ընթացակարգերի հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում անձնակազմը կարող է կրթվել՝ ավելի լավ հասկանալու և զգոն լինելու աշակերտի հաշմանդամության հանդեպ:

Այս ցանկն սպառնիչ չէ: IEP-ի ցանկացած այլ հայեցակետի նման, նպատակները, հարմարությունները և ծառայությունները պետք է նախատեսվեն երեխայի եզակի կարիքների համար:

7) Ի՞նչ ընթացակարգեր են մատչելի՝ օգնություն ձեռք բերելու համար, երբ դպրոցական համայնքը ծաղրանքից չի պաշտպանում հաշմանդամ աշակերտին:

Եթե դպրոցական համայնքը չի հետևում հատուկ կրթության օրենքներին կամ ընթացակարգերին կամ չի իրականացնում այն, ինչի վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել երեխայի IEP-ում, ապա ծնողը կարող է համապատասխանության բողոք ներկայացնել տեղական կրթական գործակալությանը: Ձևաթուղթը նշված է որպես Միավորված բողոքարկման ընթացակարգեր (Uniform Complaint Procedures): Կայքէջն է՝ <http://www.cde.ca.gov/re/cp/uc/> և <http://www.cde.ca.gov/re/di/eo/complaint.asp>.

Բացի այդ, եթե անհամաձայնություն կա դպրոցական համայնքի հետ առ այն, թե ինչ պետք է ներառված լինի երեխայի IEP-ի մեջ, ծնողները կարող են պատշաճ գործընթացի լուծման պահանջել:

Ծնողները նաև կարող են բողոք ներկայացնել Քաղաքացիական իրավունքների գրասենյակին (OCR, Office of Civil Rights)՝ ԱՄՆ Կրթության նախարարությունում (U.S. Department of Education)՝ հաշմանդամության պատճառով կրթության մեջ խտրականության մեղադրանքի վերաբերյալ, որը կարող է հանդիսանալ Վերականգնման ակտի 504 հոդվածի դրույթների խախտում:

Պատշաճ գործընթացի և բողոքը կման ընթացակարգերի մասին կարող եք հավելյալ տեղեկություններ ձեռք բերել Հատուկ կրթության իրավունքներ և պարտականություններ (Special Education Rights and Responsibilities) հրապարակումից, որն առցանց մատչելի է՝ <http://www.disabilityrightsca.org/pubs/504001SERR.htm>

[Ամսաթիվ]

Ում՝ [Դպրոցի տնօրենի անունը]

[Դպրոցի անվանումը]

[Դպրոցի հասցեն]

Ում կողմից՝ [Ծնողի անունը, ազգանունը]

[Յանունը]

Ի պատասխան՝ [Աշակերտի անունը]

Դասարան [Դասարանը]

Ծննդյան ամսաթիվ [Աշակերտի ծննդյան ամսաթիվը]

Հարգելի [Դպրոցի տնօրեն]՝

Ես դիմում եմ Ձեզ՝ տեղեկացնելու, որ իմ երեխան [աշակերտի անունը] ծաղրանքի և սպառնալիքի է ենթարկվում դպրոցում: Իմ երեխան հաշմանդամություն ունի: Իմ երեխան ունի հետևյալ հաշմանդամությունը՝ [մանրամասնեք հաշմանդամությունը]: Ես վստահ եմ, որ այս հետապնդումը հիմնված է նրա հաշմանդամության վրա:

Նրան սպառնում են [սպառնացող(ներ)ի անունները]: Սա տեղի է ունեցել [ամսաթիվը կամ մոտավոր ժամանակահատվածը], երբ [նկարագրեք դեպք(եր)ը հնարավորինս շատ մանրամասնություններով]:

Երբ սա տեղի է ունեցել [վկաների անուն(ներ)ը]-ը վկա է(են) եղել և [նրանց պատասխանը]: Իմ երեխան խոսել է [դպրոցի աշխատակազմի անդամի անունը]-ի հետ այս դեպք(եր)ի մասին [ամսաթիվ կամ մոտավոր ժամանակահատված]-ին: Նրա պատասխանը եղել է [նկարագրեք դպրոցի աշխատակազմի անդամի պատասխանը]: Ես այս դեպք(եր)ի մասին տեղեկացել եմ, երբ [նկարագրեք, թե երբ է Ձեզ ծանուցվել]:

Այս ծաղրանքը և հաշմանդամության պատճառով սպառնալիքները ազդել են իմ երեխայի՝ կրթությունը ստանալու վրա և հանգեցրել են հետևյալ բացասական հետևանքներին՝*[Նկարագրեք այն ազդեցությունները, այդ թվում ֆիզիկական վնասվածքներ /հուզական խանգարումներ կամ ազդեցություններ, բժշկական/հոգեբանական բուժման կարիք և ազդեցությունը ուսումնական կամ դպրոցական միջոցառումների հաճախելության, մասնակցության և առաջընթացի վրա]:*

Ինչպես գիտեք, իմ երեխան հաշմանդամ է, ով սովորում է Անհատական ուսումնական ծրագրով (IEP, Individualized Education Plan)/504 ծրագրով *[ընտրեք, եթե համապատասխան է]:* Դաշնային և նահանգային օրենքը պաշտպանում է հաշմանդամ աշակերտների իրավունքները՝ գերծ լինելու հաշմանդամության պատճառով կատարված ճշումից և հետապնդումից, որը միջամտում կամ զրկում է կրթությանը մասնակցելու կամ դրանից օգտվելու հնարավորությունից: Ավելին, Կալիֆորնայի օրենքով պահանջվում է, որպեսզի դպրոցական համայնքներն ընդունեն այնպիսի քաղաքականություններ, որոնք կարգելեն խտրականությունը, ծաղրանքը կամ հետապնդումը, կստեղծեն բողոքարկման գործընթաց՝ խտրականության, հետապնդման և ճնշման վերաբերյալ բողոքներ ստանալու և քննելու համար, ինչպես նաև այս քաղաքականությունը ծնողներին և աշակերտներին մատչելի դարձնել:

Խնդրում եմ ինձ տրամադրել շրջանի՝ ծաղրանքին և հետապնդմանը վերաբերող քաղաքականության օրինակը: Խնդրում եմ, որպեսզի Դուք քննեք այս խնդիրը և այն հնարավորինս շուտ լուծեք: Խնդրում եմ ինձ գրավոր կերպով տեղեկացնել Ձեր քննության արդյունքների մասին և ձեռնարկած քայլերի մասին՝ այս խնդրին անդրադառնալու համար, ինչպես նաև երաշխավորելու, որ ապագայում նման բան տեղի չի ունենա:

Խնդրում եմ նաև IEP/504 ծրագրի *[ընտրեք մեկը, եթե կիրառելի է]* ժողով գումարել հնարավորինս շուտ՝ քննարկելու հնարավոր հարմարություններ, ծառայություններ և /կամ աջակցություններ՝ այս խնդիրը լուծելու համար:

Շնորհակալություն այս խնդրին շուտափույթ կերպով ուշադրություն դարձնելու համար:

[Ծնողի ստորագրություն]

[Ամսաթիվ]

[Ամսաթիվ]

Ում՝ California Department of Education
Sharon Felix-Rochon, Director
Office of Equal Opportunity
1430 N Street, Suite 4206
Sacramento, CA 95814

Ում կողմից՝ [Ճնողի անունը]
[Ճնողի հասցեն]

Հարգելի պարոն կամ տիկին,

Խնդրում եմ ընդունել դիմում-բողոքս [դպրոցական համայնքի անունը]-ի վերաբերյալ, քանի որ ես զգում եմ, որ երեխասս [երեխայի անունը] անհրավազի կերպով խտրականության է ենթարկվել իր հաշմանդամության պատճառով:

[Աշակերտի անունը]-ը սովորում է [դպրոցի անունը] [դասարանը] -ում: Նա հաշմանդամ աշակերտ է, նա [մանրամասնեք հաշմանդամությունը] ունի: Նա սովորում է IEP/504 ծրագրով [ընտրեք, եթե կիրառելի է]:

[Աշակերտի անունը]-ը ենթարկվել է ծաղրանքի և հետապնդվել է դպրոցում՝ իր հաշմանդամության պատճառով: Սա տեղի է ունեցել [ամսաթիվ կամ մոտավոր ժամանակաշրջան], երբ [դեպք(եր)ը նկարագրեք հնարավորինս մանրամասն]:

Երբ սա տեղի է ունեցել [վկա(ներ)ի անուն(ներ)ը]-ը լսել կամ տեսել է(են) և [նրա պատասխանը]: Իմ երեխան խոսել է [դպրոցի աշխատակազմի անդամ(ներ)ի անուն(ներ)ը և պաշտոն(ներ)ը] հետ այս դեպքերի մասին [ամսաթիվ կամ մոտավոր ժամանակահատված]-ին և նրանց պատասխանը եղել է [նկարագրեք դպրոցի աշխատակազմի պատասխանը]: Ես այս դեպքի մասին տեղեկացա, երբ [նկարագրեք, թե ինչպես եք տեղեկացվել]:

Ես համոզված եմ, որ այս հալածական վարքագիծը հիմնված է հաշմանդամության վրա, որովհետև [նկարագրեք հալածման և աշակերտի հաշմանդամության միջև եղած կապը]:

Հաշմանդամության հանդեպ այս հետապնդումը թշամական կրթական միջավայր է ստեղծել, որն ազդել է իմ երեխայի՝ կրթությունից օգտվելու վրա հանգեցրել է հետևյալ բացասական հետևանքներին՝ [նկարագրեք այն ազդեցությունները, այդ թվում ֆիզիկական վնասվածքներ]

*/հուզական խանգարումներկամ ազդեցություններ,
բժշկական/հոգեբանական բուժման կարիք և ազդեցությունը
ուսումնական և/կամ դպրոցական միջոցառումների հաճախելության,
մասնակցության և առաջընթացի վրա]:*

*[Դպրոցական համայնքին նամակ ուղարկելու ամսաթիվը]-ին ես
դպրոցական համայնքին գրավոր բողոք եմ ներկայացրել և խնդրել եմ,
որ նրանք քննեն և հնարավորինս շուտ լուծեն խնդիրը: Ի պատասխան
դպրոցական համայնքը [նկարագրեք դպրոցական համայնքի
պատասխանը]: Ես վստահ եմ, որ նրանք իրենց պարտավորությունը չեն
կատարել՝ իմ երեխային պաշտպանելու հաշմանդամության վրա
հիմնված խտրականությունից և հալածանքից, քանի որ [նկարագրեք,
թե ինչու նրանց պատասխանը համարժեք չէ հաշմանդամության
հանդեպ ոտնձգությանն անդրադառնալու համար]:*

1973թ. Վերականգնման մասին օրենքի (Rehabilitation Act of 1973) 504 հոդվածը, 1990թ. Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի (Americans with Disabilities Act of 1990) Գլուխ II-ը, և Կալիֆորնիայի կրթական օրենսգրքի (California Education Code) 200, 201, 220, 234 և 234.1 հոդվածները պաշտպանում են հաշմանդամ աշակերտների իրավունքները հաշմանդամության վրա հիմնված խտրականությունից և հալածանքից, որը միջամտում կամ զրկում է նրանց կրթական գործընթացին մասնակցելու կամ օգուտ ստանալու իրավունքից : Բացի այդ Կրթություն ստացած (IDEA, Individuals with Disabilities Education Act) անձանց մասին օրենքի համաձայն՝ հաշմանդամության պատճառով հալածանքը կարող է հանգեցնել դպրոցական համայնքի կողմից անվճար և համապատասխան հանրային կրթություն (FAPE, Free and Appropriate Public Education) տրամադրելու չտրամադրելուն:

*Այս բողոքը լուծելու համար ես խնդրում եմ ինձ տրամադրել դատական պաշտպանության հետևյալ միջոցները՝ [նշեք, թե ինչ էք ցանկանում, որ
դպրոցական համայնքը կատարի՝ Ձեր բողոքարկման արդյունքում,
այսինքն՝ խորհրդատվություն աշակերտի համար, փոխհատուցող
ծառայություններ, աշխատակազմի/աշակերտների համար դասընթաց
խտրականության և հաշմանդամության հալածման վերաբերյալ,
փոփոխություններ դպրոցական համայնքի քաղաքականություններում
և այլն]:*

*Կից ներկայացնում եմ [նշեք ցանկացած համապատասխան
փաստաթուղթ/ապացույց, ներառյալ նամակներ և հաղորդակցման այլ
միջոցներ, որոշումներ և այլն]:*

Ծաղրանք և հալածանք հաշմանդամ աշակերտների հանդեպ

Խնդրում եմ ազատորեն դիմել ինձ՝ այս բողոքարկման առնչությամբ:
Շնորհակալությունն այս խնդրին արագ արձագանքելու համար:

Հարգանքներով՝

[Ստորագրություն]

[Անստաթիվ]

[Ամսաթիվ]

Ում՝ San Francisco Office
Office for Civil Rights
U.S. Department of Education
50 Beale Street, Suite 7200
San Francisco, CA 94105-1813

Ում կողմից՝ [Ծնողի անունը]
[Ծնողի հասցեն]

Չարգելի պարոն կամ տիկին,

Խնդրում եմ ընդունել դիմում-բողոքս [դպրոցական համայնքի անունը]-ի վերաբերյալ, քանի որ ես զգում եմ, որ երեխասս [երեխայի անունը] անհրավացի կերպով խտրականության է ենթարկվել իր հաշմանդամության պատճառով:

[Աշակերտի անունը]-ը սովորում է [դպրոցի անունը] [դասարանը] -ում:
: Նա հաշմանդամ աշակերտ է, նա [մանրամասնեք
հաշմանդամությունը] ունի: Նա սովորում է IEP/504 ծրագրով [ընտրեք,
եթե կիրառելի է]:

[Աշակերտի անունը]-ը ենթարկվել է ծաղրանքի և հետապնդվել է դպրոցում՝ իր հաշմանդամության պատճառով: Սա տեղի է ունեցել [ամսաթիվ կամ մոտավոր ժամանակաշրջան], երբ [դեպք(եր)ը նկարագրեք հնարավորինս մանրամասն]:

Երբ սա տեղի է ունեցել [վկա(ներ)ի անուն(ներ)ը]-ը լսել կամ տեսել է և [նրա պատասխանը]: Իմ երեխան խոսել է [դպրոցի աշխատակազմի անդամ(ներ)ի անուն(ներ)ը և պաշտոն(ներ)ը] հետ այս դեպքերի մասին [ամսաթիվ կամ մոտավոր ժամանակահատված]-ին և նրանց պատասխանը եղել է [նկարագրեք դպրոցի աշխատակազմի պատասխանը]: Ես այս դեպքի մասին տեղեկացա, երբ [նկարագրեք, թե ինչպես եք տեղեկացվել]:

Ես համոզված եմ, որ այս հալածական վարքագիծը հիմնված է հաշմանդամության վրա, որովհետև [նկարագրեք հալածման և աշակերտի հաշմանդամության միջև եղած կապը]:

Չաշմանդամության հանդեպ այս հետապնդումը թշնամական կրթական միջավայր է ստեղծել, որն ազդել է իմ երեխայի՝ կրթությունից օգտվելու վրա հանգեցրել է հետևյալ բացասական հետևանքների [նկարագրեք

այն ազդեցությունները, այդ թվում ֆիզիկական վնասվածքներ/հուզական խանգարումներկամ ազդեցություններ, բժշկական/հոգեբանական բուժման կարիք և ազդեցությունը ուսումնական և/կամ դպրոցական միջոցառումների հաճախելության, մասնակցության և առաջընթացի վրա]:

[Դպրոցական համայնքին նամակ ուղարկելու ամսաթիվը]-ին ես դպրոցական համայնքին գրավոր բողոք եմ ներկայացրել և խնդրել եմ, որ նրանք քննեն և հնարավորինս շուտ լուծեն խնդիրը: Ի պատասխան դպրոցական համայնքը [նկարագրեք դպրոցական համայնքի պատասխանը]: Ես վստահ եմ, որ նրանք իրենց պարտավորությունը չեն կատարել՝ իմ երեխային պաշտպանելու՝ հաշմանդամության վրա հիմնված խտրականությունից և հալածանքից, քանի որ [նկարագրեք, թե ինչու նրանց պատասխանը համարժեք չէ հաշմանդամության հանդեպ ոտնձգությանն անդրադառնալու համար]:

1973թ. Վերականգնման մասին օրենքի (Rehabilitation Act of 1973) 504 հոդվածը, 1990թ. Հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի II Գլուխը (Americans with Disabilities Act of 1990), պաշտպանում են հաշմանդամ աշակերտներին իրավունքները հաշմանդամության վրա հիմնված խտրականությունից և հալածանքից, որը միջամտում կամ զրկում է նրանց մասնակցել կամ օգուտ ստանալ կրթությունից: Բացի այդ, Կրթություն (IDEA, Individuals with Disabilities Education Act) ստացածանձանց մասին օրենքի համաձայն հաշմանդամության հալածանքը կարող է հանգեցնել դպրոցական համայնքի կողմից անվճար և համապատասխան հանրային կրթություն (FAPE, Free and Appropriate Public Education) տրամադրելու չտրամադրելուն:

Այս բողոքը լուծելու համար ես խնդրում եմ ինձ տրամադրել դատական պաշտպանության հետևյալ միջոցները. [նշեք, թե ինչ էք ցանկանում, որ դպրոցական համայնքը կատարի՝ Ձեր բողոքարկման արդյունքում, այսինքն՝ խորհրդատվություն աշակերտի համար, փոխհատուցող ծառայություններ, աշխատակազմի/աշակերտների համար դասընթաց խտրականության և հաշմանդամության հալածման վերաբերյալ, փոփոխություններ դպրոցական համայնքի քաղաքականություններում և այլն]:

Կից ներկայացնում եմ [նշեք ցանկացած համապատասխան փաստաթուղթ/ապացույց, ներառյալ նամակներ և հաղորդակցման այլ միջոցներ, որոշումներ և այլն]:

Ծաղրանք և հալածանք հաշմանդամ աշակերտների հանդեպ

Խնդրում եմ ազատորեն դիմել ինձ՝ այս բողոքարկման առնչությամբ:
Շնորհակալությունն այս խնդրին արագ արձագանքելու համար:

Հարգանքներով՝

[Ստորագրություն]

[Ամսաթիվ]

*Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից.
Ֆինանսավորողների ամբողջական ցանկի համար այցելեք՝
[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).*